Թուրքաց աշխարհն Ե, Ռ զուռուշ կ'ուժէր, եւ էշք որպէս ջորիս որ Հ, Զ զուռուշ կ'ա-
ժէին, զոր եւ Հալաղ տեսայ այնպիսի ջորի մի, որ Հ զուռուշ զնեցին. եւ անբան անա-
250 ռունքն այնպէս հլու եւ լսողք են, որ զինչ ասեն՝ զայն առնեն. երբեմն խաղային եւ եր-
կու ոտաց վրայ կանգնէին, եւ զամենայն խօսս սէրանց հասկանային թէ՛ բերել տանել, թէ՛
գալ թէ՛ գնալ: Այլ եւ հարեղայքն ի սովորա-
255 կան տեղիս ուղարկեն զէշն, թէ այն տնէն գնայ փայտ բեր, ջուր կամ հաց. եւ նա գնա-
ցեալ ի դուռն զրային եւ ձայն ածէին եւ ոտամբք հարկանէին, մինչեւ ելեալ ի դուռն
տեսանէին զէշն եւ խմանային վասն է՝ր եկեալ
260 է. բառնային եւ ուղարկէին ի վանսն:

Ունէին եւ իշխանքն մեծամեծ շունս որ-
պէս զոչխարս եւ ոսամսոնս. որ միշտ շրջէին
ընդ տեսուս իւրեանց. եւ թէ ոք կռվէր կամ
հարկանել կամէր զտէրն՝ վազէին ի վերայ
265 թշնամոյն եւ խածատէին: Յոսկի պատուհանս
նոցա ունէին տուտիք, զումբիք եւ պլպուլք
սովորեցուցած. այնպէս քաղցր եղանակն եւ
զրոյցս տան, որ անցաւորքն ի սիրոյն թմբին.
եւ զիտես թէ մարդիք են. եւ հայեցեալ խմա-
270 նաս թէ տուտիք են եւ հայրան եղեալ մնաս
եւ յամես ի գնալն. եւ թէ ոք առջեւ դռան
կանգնի, ի վերուստ ձայնէ աղախնացն, թէ
ելէք ի դուռս դող է եկեալ. եւ թէ բախես՝

258 յոտամբք: